

հնչելուն ալ հազիւ ուրիշ կրնայ փոխել ապի փորձով  
 տեսնուած է : Ի սոցալ թե՛նք անտի շատ տարիներ  
 Ի Պօլիս և ուրիշ անգլիկ կեցող և ուսեալ անձանց շա-  
 տերուն վե՛լ այլ Այն բերանային հնչելը օտար երու-  
 ժ շուտ թե՛ ան անտի զե՛սկ մեր և կի զեցական երաժիշտ-  
 ներէն ալ շատերը որ և որից երգ մը երգելու առնն-  
 նին կը պահէն նաեւ Ի Պօլիս : որուն սովորաբար պի-  
 րապէս էլ բնական : որ ազգային հնչելն մ'է և կե-  
 ղեցական երաժիշտ թե՛ ան մե՛ջ մնացած : ու շարուն-  
 թե՛ ան արժանի է նաեւ որ իրենց երաժիշտական հըն-  
 չիւնն ամենէն աւելի պահել կրցող ազգերն : իրենց  
 լեզուին արտասանութիւնը : հետեւ արտար իրենց աղ-  
 զային ամեն յատկութիւնները պահողներն են : Մեր  
 խօսքին և զրաւորութիւնը բնիկ յառաջ քիչ մ'ալ  
 եկեղեցական երգոց վերայ պէտք է խօսինք : քանի որ  
 հոն միայն կրցանք գտնել քիչ շատ բնականութիւնը աղ-  
 զային և գոնականք և սոցալային ճաշակ :

Պիպի շարունակութիւն :

### ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՌԱՅԻՆԻ ՌԻ ԲԱՆԱԲԱՎԻՐԹ ՊԱՏԱՆԻ

(Հարունակութիւն, տես թիւ 4) :

“ Չեր և ուրիշներուն կեանքին կը  
 վնասէք ոչ թէ միայն զուրիշը գանա-  
 կով վերաւորելով, այլ նա և կոխ ը-  
 նելով, զարնելով, բռնադատելով որ  
 ծանր աշխատութիւններ յանձն առ-  
 նուն : Անոց պահպանութիւն պարտքն  
 օտքի սակ կ'առնու այն սուտ բժիշկը  
 որ սխալ գեղեր կուտայ : ինչպէս նա  
 և անիկոց որ հոտած կամ աւրուած  
 կերակուրներ, քայտած գինիներ ու  
 տհաս պտուղներ կը ծախէ : դարձեալ  
 ով որ փոխադրական հիւանդութեանց  
 շտարածուելուն համար կարեւոր բղ-  
 դու թիւններ շններ : ինչպէս օրի  
 նակի համար ըսեիք բորոտութեան,  
 ծաղկի, մտղձախտի եւ այլն : Կուք ալ,  
 ով մարք, աս պատուիրանիս գէ՛մ կ'ը-  
 նէք, երբ որ ըստ ձեր պարտուցը ու-  
 շադութիւն չէք գներ որ տղաքնիդ  
 կրակի կամ ջրերու քով յաճախելով  
 վտանգուին : չէք պատուաստեր զի-

րենք որ ծաղկի հաննէն, երկար ժամա-  
 նակ իրենք զիրենք իրենց գլխուն կը  
 թողուք ու չէք մտածեր որ անիկոց ինչ  
 գէշ բաներ կը հետեւին : չէք արդ իկեր  
 որ կառքերու ետեւներէն չվազեն,  
 անողու շուրթեամբ զէնք չգործածեն,  
 ծառերու վրայ չէլլան ու սանդուխ-  
 ներէ վար չվազեն (1) : Այլ թէ ստիպես  
 մէկը որ շատ օրի և գինի խմէ, անոր  
 բրած գէշութեանց յանցանքը քու կը  
 է : Եթէ ստիպես կին մը որ իրեն կա-  
 լաղութեանն աւելի աշխատի, իրեն և  
 նաեւ տղուն մահուանը պատճառ  
 գուն կ'ըլլաս : Տհաճութիւններն ալ  
 կընան զմարդ հիւանդացնել ու մեռ-  
 ցնել : Թէ որ գէշ վարք անցնես՝ ա-  
 նով հօրդ կեանքը կը կարծեցնես : Ե-  
 թէ բռնութիւն ու խտուրթիւն բա-  
 նեցնես ընկերոջդ գէ՛մ, զինքը կը արքա-  
 մեցնես ու հողուոյն և թերեւս առողջ  
 ջութեանն ալ կը վնասես, որով մեծաւ  
 պէս կը մեղանչես :

“ Աւանց առօրնութեան ստակ մը  
 չեն արժեք զուարճութիւնները : Մէկն  
 որ առօր չէ, այնպիսին նաեւ հարուստ  
 է իրեն կարծածէն աւելի : Հիւանդ  
 դութիւնները ժամանակի ու ոտիկի  
 կորուստ են ու զուարճութեանց ար-  
 գելք կ'ըլլան : Այսպէց էք ուրեմն ամե-  
 նայն կերպով որ առողջութիւնիդ չը  
 կորսնցնէք, որուն մի միայն հնարքն է  
 բարեխառնութիւնը : Կուք ձեզ վե-  
 պէտք չէ վտանգներու մէջ ձգէք բղ-  
 ձեղ : բայց երբ որ գիմոցնիդ վտանգ  
 մը ելլայ՝ քաջախիտ պէտք է ըլլաք :  
 Աեղութիւններէ խալըսելու միակ մի-

(1) Երբ որ դատարանին հոսք բազմ ունենայ  
 տեսնալու այնպիսի քորոզներ որ կարող ըլլան բա-  
 րայականի վրայ երկու խօսք խօսելու : կը փոփա-  
 քինք, որ կամ վին իրենց սողմը վե՛ժող, գուտիլը  
 գիտութեամբ կամ անգիտութեամբ իրողոց մարց :  
 սա ստակով ոճիրներուն վերայ ալ խօսովն : ո՛հ պարն  
 յառայի և դատարանին Հայուն անբարոյականը :  
 Տ. անուամ օրինակովն :



Ըստ քաջասիրտութիւնն է : ( Այ թէ կրօնքը շատիկի նման փոխերը կ'աւելցնենեմք : ) Աստուծոյ թեան մէջ վախկտար կը խղզուի . իսկ քաջասիրտը աստուծոյ մը ապաւինելով կը խաղըփի : Այ թէ ի՞նչ կամ կտորած շունը վախկտա մը խաճնելու ըլլան , սորորմէ լին յուսա հաստարար լալով ու սղբալով կը մեռնի . բայց քաջասիրտը կը թողու որ հրացեայ երկաթով առդէն ու այնպէսով կ'առողջանայ :

« Այ երբէք կրնայ մէկն անհող ըլլալ ու փոյթ չընել իր կենացն ու առողջութեանը վերայ , եթէ ոչ զօրաւորագոյն սրարոր մը կամ հասարակաց բարին նոյնը զգահանջէ իրմէ . կամ թէ որպէս զի պատուոյն և պարտուցը դէմ չգործէ : ( ) Երհնեալ ըլլայ ան մարդը որ սղայ մը խղզուելու վտանգէն խաղանելու համար , ջրին մէջ կը նետուի , ու իրեն կեանքը անստոյգ վտանգի մէջ կը դնէ . որպէս զի տղան յայտնի մահուը նէ խաղըսէ : Բժիշկներն ալ ու քահա նաները հիւանդաց քովը կ'երթան , թէպէտ եւ վտանգ ըլլայ որ իրենք ալ նոյն անտէն բռնուին , որպէս զի մարմինն առողջացընեն ու հողւոյն բարիք մը ընեն : Արբոր թշնամիները ձեր հայրենիքն ընկձել կը սարանան՝ ուրիշներուն հետ դուք ալ կը զինուորիք , ու հասարակաց հանգստութիւնն ապա հովելու համար , դուք զձեզ վտանգի մէջ կը դնէք . սուրբերն ալ որոնք որ մենք հիմա կը յարգենք , աւելի յանձն առին մարտիրոս ըլլալ քան թէ հաւատքնին ու բանալ :

« Թէ որ հիւանդութեամբ անկողին լցնաք , ձեր սարսքն է ամեն հրնարք բանեցընել , թէպէտ եւ անախորժ ըլլան . որպէս զի նորէն վրայ դնէք առողջանար : Բժիշկին ըսածնէրուն սիրով մտիկ ըրէք , քաշած ցաւերնուդ ու ձեր վրայ եղած դարմաննէ

րուն սիրով համբերեցէք , ու ձեր վրայ աշխատողները մի ձանձրացընէք . նեղութիւնը մի արհամարհէք , ու նա յեցէք միանգամայն որ անով ոգեւորաւ չըլլաք : Իսկ թէ որ մահը կը մօտիկնայ , հանդարտ սրտով իրեն դալուն սպասեցէք : ( ) Եր մը փնչպէս որ իմ պարսքս է , հիւանդի մը քով դացեր էի , ու հարցուցի իրեն թէ մեռնելուդ վերայ կը ցաւիս . նայեցէք ինչ պատասխան տուաւ ինձի : Ահ , հայր , բաւ . ինչո՞ւ համար պիտի յատիժ , ի՞նչ . Թի՛նէ Թեանիլ Թե՞ղ է Թի . ես աչէի գիտէի որ Թեանիլը համար ծնած էմ . և Թի՛նէ ինձի առաջ ելող մարդիլ ընթացն : Բանի որ ծամանի ունի՛ Թեանիլ մարտելով Բարի Գործեր ընել կը ջանայի . ու ի՛նչ նայէի որ անանկ ըլլամ ինչպէս որ այս կէտին կ'ողբէ ըլլալ : Եր՞ժ հիմա վախով Բայց նաեւ վախահոնութեամբ կ'ելլամ ( Եսործոյ առջեւ , վասն զի ինչը Բարի է :

Իայց ձեր մարմնոյն առողջութեանն ու երի պէտք է , սիրելի տղարս , որ ձեր հողւոյն առողջութիւնն հագար . ուրեմն ձեզմէ հեռու ըլլան չափազանց հաճոյքներն ու ցաւերը : Թէ որ Մատուած ձեզի յաջողութիւն տայ , մի հարարանար . և եթէ ուղի նեղութիւններով փորձել զձեզ , զգուշութեամբ ու խոհեմութեամբ զձեզ ա նանց պատրաստեցէք . երբ ձեր վրայ նեղութիւնները կը զօրանան , արիւթութեամբ կրեցէք ու աննոց հետեւանք . ներուն համբերութեամբ տարէք :

« Իայց որովհետեւ ամեն բարիք Մատու ծակ կուգան , աղաչեցէք որ ձեզի առողջ մարմնոյ հետ տայ նաեւ առողջ միտք մ'ալ » :

Մասնկ կը քարոզէր այն Մոսկովորդ հայր սուրբը անցեալ կիրակի :

ԿԸ Ըարոնանիոսի :